ԱՐՄԱՒԻՐ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գաղութատանի համար տարեշրջանը 5 ֆր. կամ 2 ըբլ.-ոս. թղթդրմ.

Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 10րդ շրջանի (94 օգոստ.—95 մայիս) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով եւ 1895 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ եւ ծրար պէտք է ղրկել հեռեւեալ հասցէով. M. PORWOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

ԺԱ ՏԱՐԻ ԹԻԻ 38

1894 ԴԵԿՏԵՄԲԵՐ 8

ՆՈՅԵՄԲԵՐ 26 (Հ. Տ.)

ՇԱԲԱԹ

ԿԸՀՐԱՏԱՐԱԿՈՒԻԹԻՒՆ. ԱՆԲԱՒ. ՕՐԵՐ

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով եւ կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնելու չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցումներ կընդունուին հայերէն եւ ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՅՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Սասունի քննիչ յանձնաժողովը. — Վանէն լուրեր. — Թուրքօ-ռուսական սահմանագլխին վրայ. — Կովկաս գաղթած Հայերը. — Նամակ Եգիպտոսէն (Գահիրէ). — Սիսի հանգուցեալ կաթողիկոսը. — Հայեր ի Թիւրքիա. — Բոլոնիացիները. — Նամակ Պարսկաստանէն (Ուազտ) — Նամակ Պրազիլիաէն (Գոյազ-Ալբա). — Արտասահմանէն լուրեր. — Ծանուցումներ։

ՍԱՍՈՒՆԻ ԲՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Լոնտոնի դեկտ. 5ի լրագիրները հետեւեալ իմաստով դիտողութիւնները հրատարակած են որոնք հեռագրական դործակալութիւններն ամփոփելով հաղորդած են ֆրանսական լրագիրներուն։

«Հայաստանի կոտորածներուն համար Բ. Դրան կողմէն պաշտօնապէս մի քննիչ յանձնաժողովի ղրկուիլը բաւական չափով համարեան հատուցմունք կը թուի ըլլալ եւրոպական տէրութիւնները որոնք կը փափաքին արդարութեան գործադրութիւնը տեսնել այդ երկրի մէջ։ Փոքր-Ասիան եկած լուրերը հեղհեղտէ կը հաստատեն թէ աւելի ազդեցիկ մի դիրք պէտք է բռնել Պերլինի դաշնադրին Հայաստանի վերաբերեալ յօդուածներուն գործադրութիւնն ապահովելու համար։»

— Տէյլի Նիւս կը գրէ որ եթէ Անգլիա արտաքին գործերի նախարար Լորտ Քըմպըրլէյ միջամտութիւնը չբաւեր ի նպաստ Հայերին արդարութիւնը գործադրել տալու համար, Լորտ Քըմպըրլէյ իրաւունք ունի Եւրոպայի աջակցութիւնը խնդրելու։

— Բ. Դրան նշանակած քննիչ յանձնաժողովը Նոյ. 14/26ին Կ.պոլսէն ճանապայ եւած է ֆրանսական Մէսաժըրիի չոգենաւով դէպի Տրապիզոն երթալու համար։ Սովորականին համեմատ, Շէյխիւլիսլամի Դուռը գնացած և երդում տուած են ճշմարտութիւնը խօսելու համար...։ Վերջին վայրկեանին, յանձնաժողովի ընտրական անդամներէ մին փոխուած է. Թէվֆիկ փաշային տեղ նշանակուեր է ծովային սպայներէն իմէդ պէյ որ ծովային նախարար Հասան փաշայի աղգականն է։

ՎԱՆԷՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ կը հաղորդեն հոկտ. 23/4 նոյեմբուով հետեւեալները։

Պօղոս չելեբիկոպոս որ այժմ Պահրի փաշայի ալ բազուկն է և հարցաքննիչի դերը կը կատարէ քաղաքական յանցաւորներուն մասին, դեռ չէ յուսահատուեր էմնի առաջնորդութիւնը ձեռքն անցունելէ։ Շաբթուս իր արբանեակ եկեղեցականք և մի կարգ ազաներ դարձեալ խնդրագիրը ուղղեցին ի Պաղիսարքարան, գէթ իրը վոխանորդ զայն հաստատելու համար (1)։

— Պաշդալէի Շէյխ Համիտ փաշան, Աբճէլի Էմին փաշան և ուրիշ մի քանի Համիտիէ գլխաւորներ քաղաքս բերուած են այս օրերս. պատճառը յայտնի չէ։

— Մշոյ Լարդի մասին այստեղ առնորոշ լուրեր միայն կրցած ենք ստանալ. լուսաձին նայելով 10.12 գիւղեր սուրի և կրակի մատնուած են. փախչողները ձերբակալուած են. գեղեցիկ կանայք և աղջկունք 100ներով յափշտակուած և տղայք ու յղի կանայք սրե անցուած, ձիերի ոտնակոխ եղած են։ Ըստ ոմանց քննիչներ եղած են այդ վայրենի բարբարոսութիւնները քննելու։ Վանի անգլիական հիւպատոսը որ Մուշ կը գտնուէր, չէ եկած տակաւին։ Էրզրումի կողմը մի կարգ քրդական գիւղեր աւերակուած են. ըստ ոմանց, քիւրտ յեղափոխականները փորձեր են Մուշերին ալ իրենց տիրիֆէներ ցոյց տալ. ըստ այլոց, կառավարական մի խաբէութիւն է, իբր թէ Մուշի Լարդի հեղինակները զբօսպելու եկեր է։ Քիւրտերէ ալ շատ մարդ սպաննուած են Սասունի կռիւներուն մէջ։

— Նշանակելի է որ տեղւոյս հիւպատոսարաններն ալ սովորական յարգանքը չեն վայելեր. ռուս հիւպատոսարանի քավազը Արճակի մէջ զօրքերէ ծեծուելեն ալ բանտարկուեցաւ. հիւպատոսը հատուցում չէ պահանջած դեռ (2)։ Պարսից հիւպատոսարանը փոխէ մը յանկարծակի խուզարկուեցաւ մինչեւ իսկ և այդ բանի համար փոխանակ պատժի՝ պատուանշան ստացաւ բոլիսը։

(1) Մեր ստացած տեղեկութիւններուն համեմատ, Պահրի փաշան ինք ալ յաստուկ մի նամակ գրեր է Պաղիսարքարան, Պօղոսին Առաջնորդ նշանակելու համար. բայց պաղիսարքական Տեղապահը բացասական պատասխան է ղրկեր։

ԽՄԲ.

ԹՈՒՐՔՕ-ՌՈՒՍԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՆ ՎՐԱՅ

Օտեսայէն հեռագրած են Լոնտոնի «Թայմզ» լրագրին հետեւեալը։

«Գոսթիօմա» պատերազմանաւէն դատ որ 2000 հոգւով և բազմաթիւ թնդանօթներով մեկնած էր, մի ուրիշ պատերազմանաւ ալ քիչ ժամանակէն պիտի երթայ վլատիվոսթոգ չինական ջուրերը. բայց այդ պատերազմանաւ «Օրէլ»ը չէ, որովհետեւ «Օրէլ»ը, ինչպէս նաեւ «Սարատով» չոգենաւը, կը գործածուի Օտեսայի զօրքերը պաշտօնի վրայ Ռուսիոյ տեղերն աւելցունելու համար։ Կը կարծուի թէ ռուս զօրքերուն այդ տեղ աւելնալուն պատճառ եղած են Հայաստանի մէջ եղած խռովութիւնները։

ԿՈՎԿԱՍ ԳԱՂԹԱԾ ՀԱՅԵՐԸ

Յայտնի է որ Թիւրքահայաստանէն սովին պատճառով Կովկաս գաղթած Հայերին ժամանակաւորապէս միայն թոյլատրուած լինելով, վերջերս հրամայուած էր իրենց վերադառնալ Թիւրքիա. խեղճերը երկու Թրի մէջ պեղ մնացած էին. մէկ կողմէ ռուս կառավարութիւնը կը հրամայէր վերադառնալ իրենց հայրենիք. իսկ երբ սահմանն անցնէին, միւս կողմէ Թիւրք զօրքերն ու համիտէյէները զիրենք կողոպտելով ու ծեծելով կը սպրտէին վերադառնալ Ռուսիա։

Վեհ. Կաթողիկոսը այդ խեղճերի համար դիմումներ արաւ ռուս կառավարութեան որ բարեհաճեցաւ իմացունել Ն. Վեհափառութեան թէ գաղթականներուն թոյլատրուած է այս ձմեռ ալ Կովկաս անցունել։

(2) Ինչպէս նկատած կը լինին մեր ընթերցողներ Արմենգեան նախորդ թուին մէջ, Սուլթանը պատուանշան ղրկեր է Վանի ռուսական դեր-հիւպատոսին և իր թարգմանին։ Կերեւի թէ այդ միջոցով ուզեր է սիրաշահել զանոնք։

ԽՄԲ.

ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԷՆ

Գահիրէ, 1 դեկտ. 94

Գահիրէի «Հայոց Բարեգործական ընկերութեան» սրճարանին մէջն էր որ գիշեր մը, բոլորովին չսպասելով, հայերը տեղեկացան Սասնոյ ամենաազէատալի կոտորածի դէպքին։ Երբ ամեն մարդ ընթերցանութեամբ և կամ զանազան խաղերով կը պարապէր, իսկոյն սրճարանին պատին վրայ կախուած քառակուսի սեւ տախտակին առջեւ խռնուեցաւ ամեն ոք. Հասսի գործակալութեան հեռագիրն էր որ, երբ մահազդ աւելի քան 6000 հայերու, ամեն մարդ վերջին ծայր տխրութեամբ կը կարդար տեղի տալով քովի ընկերին որ անհամբերութեամբ կսպասէր իր կարգին որ ինք ալ կարդայ։ Սրճարանի շրջանակէն նոյն գիշերն իսկ մահագոյժը տարածուեցաւ դրեթէ ամեն հայու տուն։

Հետեւեալ առտուն մէկ երկու երիտասարդներ անգլիական կառավարութեան Եգիպտոսի հայ գաղթականութեան կողմէ հեռագրելու գաղափարն յղացան։ Եւ երբ այս նպատակին իրագործման համար ուրիշներն ալ մտնակցելու փափաքելով հանգանակութեան ելան, իրենց միացան ուրիշներ ալ և որոշուեցաւ թէ՛ անգլիական և թէ՛ ռուսական կառավարութեան միանգամայն հեռագրել։ Ռուսի հետեւեալ իմաստով հեռագիրները քաշուեցան Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան և Ռուսիոյ նոր Ջարին։

«Արտաքին պաշտօնատուն Լոնտոն

Սասնոյ խիստ արկածալից դէպքերուն Ձեր բարի ուշադրութիւնը կը խնդրենք։

Հայ գաղթականութիւն»

Ռուսաց կայսեր հեռագիրը.

«Կայսեր Ռուսիոյ

Շնորհաւորելով Ձեր վեհափառութիւնը Ձեր գահակալութեան առթիւ, Ձեր խորին ուշադրութիւնը կը խնդրենք Սասնոյ արկածալից դէպքերուն։

Հայ գաղթականութիւն»

Մեծ սրտայուզութիւն կը տիրէ քաղաքիս հայ գաղթականութեան մէջ։

ԱՐԱՄ

ՍԻՍԻ ՀԱՆԳՈՒՅՑԱՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Երէկ տխուր պարտաւորութիւն մը կատարեցինք՝ գուժելով Սոյ Ա. Ժեն. Տ. Մկրտիչ Կաթողիկոսին մահը, զոր վերջին վայրկենին իմացած էինք։ Հանգուցեալն իբր 80 տարեկան էր։ 1860ին եպիսկոպոս ձեռնադրուած էր Տ. Մատթէոս Կաթողիկոսէն։ Առաջնորդական պաշտօնները վարած էր այլ և այլ կիլիկեան թեմերու մէջ, Եոզղատ, Ատանա, Մարաշ։ 1870ին, Ալապահեան ընտանիքէն Տ. Նիկողոս անվաւեր կաթողիկոսն Արմաշի վանքը բերուելէ ետքը, տեղւոյն կաթողիկոսական խնդրոյն վերջ տրուելու համար նոր ընտրութեան ձեռնարկուեցաւ, որ տեղի ունեցաւ Ատանայի մէջ, կայսերական կառավարութեան արտօնութեամբ։ 1870 սեպտ. ամսուն, Պատրիարքարանի Թադրիբին համաժամ Սէֆէրեան Տ. Սիմէոն եպիսկոպոս և Ծովհաննէս էֆ. Ֆրէնկեան իբրեւ պատուիրակ Ատանա ղրկուեցան ուր Սոյ ընտրեալ թեմերէն ըստ օրինի եկած առաջնորդք կամ անոնց փոխանորդող քահանայք և աշխարհականք ընտրելեաց ցուցակ պատրաստեին և Կ.պոլիս ղրկեցին։ Կեդրոնական վարչութիւնը նոյն ցուցակը վերադարձուց՝ ջնջելէ ետքն անոր մէջ նշանակուած Երուսաղեմի և Կ.պոլսոյ Պատրիարքաց անուններն, որպէս զի Սոյ կաթողիկոսութիւնն այս երկուց Պատրիարքութեանց միոյն հետ չմիացուի։ Յաւարտ ընտրութեան, որոյ արդիւնքն հեռագրաւ յանուցուած էր, և պարագային սահպողութեան պատճառաւ հեռագրաւ վաւերացած էր Պատրիարքարանի Ժողովէն, ի դործ դրուեցաւ այն սկզբունք թէ «ընտրութիւնը գաւառին և վաւերացումը կեդրոնին» պէտք է ըլլան։ Նոյմ. ամսուն մէջ Թադրիբով կայսերական կառավարութենէն կնդրուեցաւ կաթողիկոսութեան Պէրաթին, որ չնորհուեցաւ 1871 ապրիլ ամսուն մէջ։ Հետեւապէս, հանգուցեալը Սոյ կաթողիկոսական Աթոռոյն վրայ կը դտնուէր 24 տարիէ ի վեր։ Իսկ Տ. Նիկողոս Ալապահեան Սրբազան քանի մը տարի ետքը Պատրիարքարանէն արտօնուեցաւ Սոյ իր բնավայրը դառնալու, ամեն պահանջումներէ հրաժարելով, և իր դործերը իրեն վերադարձուեցան, զորս ինք ապա Աթոռին կտակելով մեռաւ Ատանա, ձեր և տակաւ վիճակի մէջ, հաշուելէ ետքը Տ. Մկրտիչ Կաթողիկոսին հետ։

Տ. Մկրտիչ Կաթողիկոս ճարպիկ և ճարտարախօս անձ մ'էր և ժամանակը օժանդերէն իր դործնական վարժութիւն իրեն շատ օգտակար եղած էր տեղային իշխանութեանց հետ իր բազմաթիւ յարաբերութեանց մէջ որպէս և 1879ի վերջերն և 1880 տարւոյն մէջ, երբ Կ.պոլիս եկած և նոր Պէրաթի առած էր՝ ուղղակի յարաբերութիւն ունենալու համար, առանց միջնորդութեան Պատրիարքարանի։ Բայց իր լեզուական այժեր ինչպէս և իր անձնական հարստութիւն թեմին համար օգուտ չունեցան, և այս գրեթէ քառորդ դարու մէջոյին եկեղեցական, կրթական կամ բարեգործական նոր հաստատութիւն մը չհիմնեց իր բազմակարօտ չրջանակին մէջ, ո՛չ ալ հանրօգուտ կտակ մը թողած է, որքան դիտենք։ Պահ մը ժառանգաւորաց վարժարանի մը պէս բան մը կազմեց, ուր աշակերտողներուն չարժական վիճակը, կամ կաթողիկոսին հետ չարունակ տեղ փոխելն և այլ պարագայք ոչ սակաւ դիտողութեան առիթ եղան ազդային լրագրաց մէջ։ Իր Սոյ Աթոռը չէնցնելու համար բան մը չէր ըրած, և իր կեանքին մեծագոյն մասն անցուցած էր Աթոռէն հեռի, Հալէպի կամ Ատանայի մէջ։ Եթէ իր անձնական գոյքերը լաւ անտեսուին, բան մը որ այժմ յոյժ կասկածելի է, իր թեմ գէթ այսու հետեւ կրնայ հոդեւորապէս օգտուիլ։ Յուսալի և մաղթելի է մանաւանդ որ իր յաջորդին պաշտօնավարութիւնն աւելի օգտակար ըլլայ Եկեղեցւոյ։

(Արեւելք)

ՀԱՅԵՐ Ի ԹԻՒՐԻԱ

Պատրիարքարանը մի թագրիրով (յայտագիր) Բ. Դրան իմացուցեր է Սիսի Ա.ժեն. Մկրտիչ կաթողիկոսի վախճանիլը և հրամանադիր խնդրեր է որ Գեր. Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեան կաթողիկոսական Տեղապահի պաշտօնով կիլիկիա երթայ, թաղն ժողովի որոշմանը համեմատ։

— Պատրիարքարանէն հեռագրով պատուիրուեր է Հալէպի Առաջնորդական փոխանորդին որ հանգուցեալ կաթողիկոսի յուղարկաւորութիւնը վայելուչ կերպով կատարուի և պէտք եղած միջոցները ձեռք առնուին պահպանելու համար թէ՛ կաթողիկոսարանի և թէ՛ հանգուցեալ կաթողիկոսի անձին վերաբերեալ դոյքերն ու գրութիւնները։ Նոյնպէս իմաց տրուած է որ Գեր. Աբրահամ եպիսկոպոս չուտով ճանբայ կելնէ Հալէպ երթալու համար։

— Հանգուցեալ Աբզուման Սահեան էֆէնտիի կողակիցը Տիկին Խուսհի Աբզուման, որ այս օրեր մեռած է, կատկով նուիրեր է 100 օսմ. ոսկի Ս.Փրկչեան Աղգ. Հիւանդանոցին. նաեւ տարեկան 2520 ղրուշ վարձք բերող և 300 ոսկի արժողութեամբ երկու սենեակներ՝ որոնք Մեծ Նոր խանին մէջ են, Օրթագիւղի Ս. Աստուածածնին եկեղեցիին։ Հանգուցեալը իր զաւակներէ յանձնարարեր է նաեւ չարունակել իր արած ամսական 250 ղրուշ օժանդակութիւնն խեղճ և ծեր *** այրի կնոջ մինչեւ անոր մահը և ամսական 450 ղրուշի օժանդակութիւնն ***ի երեք որբ աղջիկներուն մինչեւ իրենց 25 տարեկան լինելը, պայմանով որ առաքինի կեանք ունենան. հակառակ պարագայի մէջ դադրի իրենց եղած օժանդակութիւնն։

— Բ. Դուռը Թիւրքիա մանելն արդիւնց եւրոպական լրագիրներէն բոլոր այն յիւեերն որոնց մէջ պատմուած էին Սասունի դէպքերը, Ֆրանսերէն մի քանի լրագիրներէ Թիւրքիա մուտքը բոլորովին խափանեց։

— Խասպիւղի Գալֆայեան Որբանոցի մայրապետ Երանուհի Յովհաննէսեան 2500 ոսկիի ապահովագրել տուեր է ինքզինք ի նպաստ Որբանոցին. այնպէս որ եթէ ինք մեռնի, Որբանոցին սահուհիները բոլորովին անխնամ չպիտի մնան, 2500 ոսկիի պատրաստ մի դրամագլուխ ունենալով։

Մի բարեսէր ազդեցիկ տիկին ալ խոստացեր է Երանուհի մայրապետին որ Որբանոցի խարխուլ չէնքը հիմնովին վերանորոդէ, բոլոր ծախքը իր անձնական քսակէ վճարելով։

ԲՈԼՈՆԻԱՑԻՆԵՐԸ

Ցայտնի է մեր ընթերցողներուն որ Նիկոլա Զարը իր գահակալութեան եւ ամուսնութեան առթով ներում շնորհեց մի կարգ դատապարտուածներու (Տեսնել Արմէնիա թիւ 36)։

Ծանօթ հրապարակագիրներէն Տիար Բօլ Փինիօրի Petit Marseillaish մէջ այդ առթով հրատարակած է հետեւեալ հետաքրքրաշարժ յօդուածը։

Նոր Զարին թագաւորութիւնը կակի վրհանձն գործերով, արժանի մի երիտասարդ վրհապետի որ իր ժողովրդի սիրոյն վրայ միայն կուզէ յենուլ։ Իր այդ դթութեան գործերէ մին եղաւ մի իւքազի (հրովարտակ) հրատարակութիւնը որ կատարեալ ներողութիւն կը շնորհէ Բոլոնիաի 1863ի ապստամբութեան առթով դատապարտուածներէն անոնք որոնք մահապարտութեան տակ կը դտնուէին մինչեւ այժմ, նոյն իսկ եթէ իրենց համար վճռուած պատիժները իրենց չնորհուած լինէին։

Այդ ներողութեան դործը մի լաւ տպաւորութիւն պիտի ունենայ Ֆրանսայի մէջ։ Ռուսիոի համար մեր ունեցած եռանդուն համակրութիւնները չէին կրնար մոռցնել տալ մեզ թէ Բոլոնիացիները մեր հին յաճախորդներ (1) եղած են. թէ, դեռ ոչ շատ ժամանակ առաջ, անոնք իրենց վստահութիւն մեր վրայ դրած էին. թէ մենք ալ դէպի այդ աքսորականներ պարտաւորութիւններ ունէինք։ Երբ Բոլոնիացիները յաղթուեցան 1862ի իրենց ահեղ ապստամբութենէն յետոյ օրի միջոցին այնչափ դիւցազնութիւններ կատարուեցան, անոնք իրենց աչքեր դարձուցին դէպի մեզ իրրեւ ամենէն աւելի հիւրընկալ աղգը։ Ֆրանսա —Նաբոլէոն Գ.ի կառավարութիւնը իրենց իրական օդնութեան յոյսեր տուած չէր ըլլար անխոհեմաբար բաւական երկար ժամանակ—սիրալիր կերպով ընդունեց զիրենք. այստեղ ապաստանողներուն մինչեւ իսկ օդնութեան յանձնաժողովներ կազմուեցան որոնք մինչեւ այսօր ալ մեր եվմոպոյսի հաշուին մէջ կը նշանակուին անոր չատ ծախք չպատճառելով որովհետեւ հազիւ հարիւրի չափ կը լինին այժմ այդ խոշակառուները։ Իրենց երիցագոյնն էր դեռ մօտիկ ատենները — չեմ գիտեր թէ հիմա ալ ո՞ղջ է — Տ. Թէոտոր Վիօլէ (Wiolé), Լանցիէվիչ դիկտատորի նախկին Թիկնապահը։

Մեր նոր բարեկամութիւններ, որչափ ալ անկեղծ լինին, կարո՞ղ են մինչ Ֆրանսայի պէս պատուաղդած մի երկրի մէջ մեզ ուրանալ տալ մեր հին բարեկամութիւնները։ Իմ մանկական յիշատակները կը յիշեցունեն ինձ այն հանդանակութիւնները, թատերական ներկայացումները, երեկոյթներ որոնք կը լինէին օդնութեան հասնելու համար յաղթուած Բոլոնիացիներուն որոնց մի ապաստան կտայինք մեր մէջ։

Դիպուածն այնպէս բերաւ որ Նիկոլայ Բ Զարի այս դթութեան լուրը փարիզ կը հասնի ճիշդ այն րոպէին որ գաղթական Բոլոնիացիներն իրենց տարեկան սովորութեան համեմատ կը խմբուէին եղբայրական մի ճաշկերոյթ անելու որ իրենց համար սուգի մի ճաշկերոյթ էր միշտ և որ իրենց մէջ կարծնցուներ իրենց երբեմն փառեղ կատարած կռիւներուն յիշատակները։ Բոլոնիացիներն որոնք երկար ժամանակէ ի վեր սոխպուած անձնատուր եղեր էին իրենց բազդի, այժմ ազատ լինելով վերստին տեսնելու իրենց հայրենիք, այս անգամ չնորհապարտութեան մի զգացում պիտի ունենան դէպի իրենց նոր վրհապետը։

Բոլոնիացինե՛րը։ Դիտե՛ք թէ այն խնդիրը որի մասին կը խօսիմ, օրուան նոր խնդիրներէն չէ ա՛լ և թէ այն հին օրերի պատմական փայլը հետզհետէ մարած է ա՛լ մեր մէջ։ Բայց երբեմն մեր երկիրը իրեն պատիւ համարեց այն բարեպաշտութիւն որ ցոյց տուաւ անոնց նկատմամբ որոնք դըժբաղդութիւններուն ամենէն մեծն ունեցած էին որ է ա՛լ հայրենիք չունենալու դժբաղդութիւնը։ Եւ ինչո՞ւ համար մենք պէտք է ուրանանք այդ պատիւ, թէեւ հանդամանքները փոխուած լինէին։

Այսու ամենայնիւ, ատոնք հինցած յիշատակներ են։ Մխիթարին մէջ հանդարտութիւնը տիրեց հետզհետէ։ Ռուս կառավարութեան Բոլոնիաի դէմ ձեռք առած բացառիկ միջոցները կամայ կամայ վերցան։ Այդպիսի հաշտութիւններ չատ անդամ կատարուած են նոյն իսկ այնպիսի թշնամիներու մէջ որոնք անհաշտելի կը համարուէին։ Ժամանակը ամեն բան կը վերսխէ։ Այժմ կարելի է, առանց խիստ դըժդոհութիւնների առիթ տալու, մատնել այն կռիւների վրայ որ այնչափ արձագանք դտան Ֆրանսայի մէջ։ Զարն ուզեց այդ կռիւներուն վերջին հետքերն ալ ջնջել։

Այդ ապստամբութեան կռիւներուն պատմութիւնն ալ լուսաբանուած է այժմ։ Մեր գտնուած տեսակէտէն աւելի լաւ կրնանք այժմ դիտել կատարուած եղելութիւնները։ Պր. Պիզմարքի ազէտաբեր ձեռքը խաղցած է նաեւ Բոլոնիաի գործերին մէջ։ Ապացոյցներով հաստատուած է ա՛լ թէ Պր. Պիզմարք, որ այն ժամանակ Բրուսիաի արտաքին գործերու նախարարն էր, կը չանայ եղեր պզտոր ջրին մէջ ձուկ որսալ. ատոր համար

(1) Client (առեւտրի կամ իր գործերուն պաշտպանութեան համար մէկու մը հետ յաճախ յարաբերութեան մէջ գտնուող)։

ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱՅՈՑ

ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱՅՈՑ

Թիֆլիս, 27 մարտ. 1894
(Ի-րմ-Կիրճէ 26 Մարտ)

Մարտյոր Շուլվեյիեանց վիճարան

Ես ոչ միայն ուրախ եմ, որ ինձ ընտրեցիք ձեր ներկայացուցիչ, այլ նաև շնորհակալ եմ ձեզանից, որ ինձ ընտրելով՝ ինձ տուեցիք առիթ ձեզ ասելու այն ամենը, ինչ որ ես ուզում եմ ասել ձեզ։ Ես ուզում եմ ասել ձեզ, որ ես ձեզ հետ միասին ուզում եմ աշխատել մեր ազգի ազատութեան համար։ Ես ուզում եմ ասել ձեզ, որ ես ձեզ հետ միասին ուզում եմ աշխատել մեր ազգի լուսաւորութեան համար։ Ես ուզում եմ ասել ձեզ, որ ես ձեզ հետ միասին ուզում եմ աշխատել մեր ազգի բարգաւաճման համար։ Ես ուզում եմ ասել ձեզ, որ ես ձեզ հետ միասին ուզում եմ աշխատել մեր ազգի միութեան համար։ Ես ուզում եմ ասել ձեզ, որ ես ձեզ հետ միասին ուզում եմ աշխատել մեր ազգի ապագայի համար։ Ես ուզում եմ ասել ձեզ, որ ես ձեզ հետ միասին ուզում եմ աշխատել մեր ազգի ներկայի համար։ Ես ուզում եմ ասել ձեզ, որ ես ձեզ հետ միասին ուզում եմ աշխատել մեր ազգի անցեալի համար։ Ես ուզում եմ ասել ձեզ, որ ես ձեզ հետ միասին ուզում եմ աշխատել մեր ազգի ամենայն բանի համար։

(1) Մի քանի պատճառներով մենք ստիպուած եղանք այս ճառը տպել մի քանի օր ուշացումով։

ՎԵՐՆ

Իրաւունք ընդհանուր ժողովի

Ամիսներ անցան, որ մենք ուրախութեամբ տեղեկացրինք մեր ընթերցողներին, թէ Ազգային Ժողովը ընդունեց մի նոր կանոնադրութիւն, որով ամէն մի հայ, որ 25 տարեկան է լրացրել, իրաւունք է ստանում ընտրելու եւ ընտրուելու։ Այդ կանոնադրութիւնը ստացաւ նաեւ Վեհափառ Հայրապետի հաստատութիւնը, եւ այսօր նա օրինական ուժ ունի։ Ուրեմն, ամէն մի հայ, որ 25 տարեկան է լրացրել, իրաւունք է ստանում ընտրելու եւ ընտրուելու։ Այդ իրաւունքը նրան տուել է Ազգային Ժողովի նոր կանոնադրութիւնը

եւրոպական ձեւի աչխարհիս ազնուու-
թիւնները ճանչցող մը ըլլայ, գիտնա-
կան, պարկեչտ ու տեսօք անձ մը և
Աստուածաբան : Նաեւ ամենէն առաջ
այս՝ որ եւրոպական լեզուի մը տե-
ղեակ ըլլայ. ամենէն աւելի գերմանե-
րէնի համար կը փափագուի. բայց ե-
թէ չէ, գոնէ գաղղիերէնի գիտցող, որ
տեղւոյն հանգամանաց և ուզածին հա-
մեմատ Ազգին ներկայացնող մը կարե-
նայ ըլլալ օտար ազգերու դիմաց: Ո-
րու համար յիշեալ Ազգապետութիւ-
նը կառաջարկէ խոստանալով նախ ո-
րոշակի թոշակ մը, տարեկան 2,000էն
մինչ 2,400 ֆրանք. այնուհետեւ բնա-
կարան մը բնակելու համար. և ե-
րբոր բոլոր կեդրոն կոչուած եկամուտը
ըստ մերս Հայաստանեայց Ազգիս հին
սովորութիւններուն : Բայց միանգա-
մայն կը խնդրէ որ վերոդրելոց համե-
մատ գտնուող պատուելի անձը, որ ու-
նի բարեհաճութիւն և համզուամ ա-
սոր համար, առանց ուշ մնալու բա-
րե հաճի ազդ առնել մեզ այս հասցէով.
Warteres Garabed Ritter von Prun-
kul Armen- Cultus Praesident SUC-
ZAVA Bucovina (AUSTRIA), մա-
տեղ խրկելով ունեցած վկայականներն
ցուցնելով թէ ո՞ր տեղացի է և թէ
ո՞ր գպրոցի աշակերտ է եղեր :

Սուչաւայի Հայոց Ազգային Հոգա-
բարձութեան

Նախագահ
Առաքել վարդերես Կարապետեան
ՖՕՆ ԲՐՈՒՆԴՈՒԼ

Կնիք
Սուչաւայի
Հայ ազգապետաց

ՄԱԹՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը կարելի է ըս-
տանալ Արմենիայի խմբագրատունէն
էրենց առջեւ նշանակուած գիներով
որոնց մէջ հաշուուած է և դրկելու
փոստի ծախքը :

Արժէքը կանխիկ վճարուած՝ գիրք
չդրկուիր

Վ. Փափազեանց—Պատկերներթիւր-
քահայերի կեանքից (Հեղինակին 11
հատ նաթնտիր վէպիկները).

4 ֆրանք :

Բ. Ց. Վարդուկեանց. ԴԱՒԼԱՑԼԻԿ
Գրուած Ա. (Հեղինակին յատուկ ոճն
եզող ճարտար բանահիւսութեամբ և
գրաբար լեզուով գրուած ոտանաւոր-
ներ են Աստուծոյ արարչագործու-
թեան հրաշալիքներն պատմող) : Գինն
է 75 սանթիմ :

Խօսք վասն Հայրենասիրութեան
Բ տպագրութիւն 60 սնթմ.

Հ. Կղեմէս Վ. Սիպիլեան, Դասա-
խորհրդի Ռուբինեան դրամոց (Մէկ
լուսանկարատիպ պատկերով, վեց
վիմատիպ տախտակօք — 79 պատկեր
—, և 53 պատկերօք ի բնագրին, ո-
րոց մէջ կան բազմաթիւ չհրատարա-
կեալներ: Մեծ 8° երես ԺԶ+88+32).
Վիէննա 1892 : Գինն 7 ֆրանք:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ Է ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ (1794–1894) ՅՕԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այս պատկերը որ «Հանդէս Ամ-
սօրեայ»ի խմբագրութիւնը հրատա-
րակած է ներկայ 1894 Յունուարի
Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւորու-
թեան դարադարձը լինելուն առթով,
մեծ միաձալ դիրքով է լուսատիպ
(phototypique), որի մեծութիւնն է
50 × 35 սանտիմեթր, տպուած 70 ×
45 սանտիմեթր քարտոնի (carton)
վրայ այլ և այլ բնագրով : Մէջ տեղը
գրուած է Հայ լրագրութեան հիմնա-
դրին՝ Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւո-
նեանի պատկերը, և բոլորտիքը՝
1894ին հայերէն լեզուով հրատարա-
կուող բոլոր լրագիրներըը իրենց խմբ-
բագրապետներու պատկերներով :

Գինն է 1 րբլ. 50 կպկ. կամ 4
ֆրանգ, ճանապարհածախսով միասին:
Պարսկաստանի համար 1 րբլ. ռակն.
կամ 2 ֆր. եւ 50 սնթմ.

Սոյն առթիւ կը յայտնենք որ լոյս
տեսած է նաեւ

Գալէմքեարեան Հ. Գ., Պատմու-
թիւն Հայ լրագրութեան ի սկզբանէ
մինչեւ մեր ժամանակը: Հտր. Ա. 1794-
1860. մէկ լուսատիպ պատկերով :
Վիէննա Մխիթարեան տպարան 1893:
Գին՝ ճանապարհածախսով՝ րբլ. 1 կամ
2 ֆր. և 50 սանթիմ :

Վերոդրեալ պատկերն ու գիրքը
առնելու համար, դիմել Վիէննա
Մխիթարեան Պատուաբժան Մի-
քանութեան որ հրատարակած է զա-
նոնք :

Կարելի է նաեւ առնել զանոնք,
դիմելով Արմենիայի խմբագրութեան:

ՀԱՑՈՑ ՀԱՑԲԵՆԱՍԻՐԱԿԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ
Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միու-
թեան» հրատարակած այս վարդապե-
տարանի մէջ համառօտ կերպով բա-
ցատրուած է թէ իւրաքանչիւր հայ-
րենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք
է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կա-
տարելու :

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հա-
յերէ իրենց շրջանի մէջ տարածել այս
տետրակ : Մէկ անդամէն 50 օրինակ
ծախու առնողին կը դրկուի 5 ֆրանքով
Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաս-
տանի Հայերին համար 10 սանթիմ) :

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան
ալ կընդունի ծանուցումներ հրատարա-
կելու համար. անոնք որ պէտք կունե-
նան Արմենիայի միջոցով մէկի դիմում ա-
նել կամ մի բան յայտարարել, պատրաստ
են ընդունելիրենց ծանուցումներ ըստ,
լրագրական սովորութեան : Ծանուցում-
ներուն գիները նշանակուած են Արմենիայի
ճակատը, տառին վրայ հաշուելով. 1 եր-
կաթագրի (գլխագիր) համար 2 սանդիմ
և 1 բոլորգրի համար 1 սանդիմ: 3 ան-
գամ դրուելիք ծանուցումի գինին վրայ
0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի ան-
գամներ դրուելիք ծանուցումի գնի վը-
րայ 0/0ի 30 զեղչ: Սակարկութիւն չընդունուիր :

Նշանակք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թա-
գաւորութիւններուն նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ,
կապոյտ և դեղին գոյներով ներկուած: 1 ֆրանգ :

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՄՐՈՒԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ցանկական բռնութեան նահատակ
եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Մըր-
բազանի պատկերը ընտիր թղթի վը-
րայ տպուած կը ծախուի Արմենիայի
խմբագրատունը : Գինն է 65 սան-
թիմ, փոստի ծախքը խմբագրատու-
նէն վճարուելով :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարա-
կած գիրքերուն վրայ ժամնաւոր զեղչ
կը լինի Պարսկաստանի Հայերին հա-
մար որոնց կը դրկուի փոկադծի մէջ
նշանակուած գիներովը :

Ա. ՀԱՑ ԳԻՒՑԱԶՆՈՒՆԻ ՄԸ (Սպառած):
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՕԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄ-
ԲԱՊԵՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաս-
տանցիներուն պանդխտութեան տխուր
հետեւանքներուն մէկ փոքրիկ պատկերը
կը ներկայացունէ վիպական կերպով:)
Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔԱՔԻՉԱ — ԾՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենի աւարտե-
լուն (Մեծ ծանուն հայ բանաստեղծին
վերջերս գրած ազատաշունչ ընտիր ո-
տանաւորներէն 3ը՝ առանձին տետ-
րակով հրատարակուած են) : 50 հատը
2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.)
10 սանթիմ :

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ.
(Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱ-
ՑԻՆԵՐ (Թիւրքիայի Հայերին և իրենց
դրացի ազգերի վրայ վիճակագրական
և ցեղաբանական ամփոփ և հետա-
քրքրաշարժ տեղեկութիւններ կը պա-
րունակէ : Թիւրքահայաստանի մէջ բը-
նակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն
թիւին բաղդատական մէկ ցուցակն
ալ կցուած է տետրակին վերջը :) Գինն
50 սանթիմ (35 սանթիմ) :

Թ. «ԱՐՄԷՆԻԱՅԻ ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի
Ա տարեշրջանի թիւերը այժմ քսորթո-
վին սպառած և մեւնոյն ժամանակ
չատերի հետաքրքրութեան առարկայ
դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ.
Փորթուգալեանի գրած առաջնորդող
յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփ-
ուած են ցուցարարի մէջ որ ուրիշ
դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։
(1 ֆրանք) : 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիայի մէջ Թիւրքերի
արած բարբարոսութիւններէն մի փոք-
րիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց
կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի մի-
ջոցներէ դիմած են իրենց վրէժ լու-
ծելու համար) : (15 սնթիմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՑԱՐԻՍ (Ցունաստանի մէջ
Թիւրքերի արած բարբարոսութիւն-
ներէն մի փոքրիկ պատկեր կը ներկա-
յացունէ և ցոյց կուտայ թէ Յոյներն
ի՛նչպիսի միջոցներէ դիմած են իրենց
վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ)
,20 սանթիմ :

ԺԲ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՕՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրե-
նասիրական ոտանաւորներէն մի քանին
ամփոփուած են այս տետրակի մէջ իբ-
րեւ նմոյշներ զանազան քաղաքներէ
մէջ և զանազան տպարարութիւնները
տակաւրերեակի գրած ոտանաւորներէն
որոնք ժամանակին հրատարակուած չի
լինելով կորսուած են այժմ: Այն մի
քանի ոտանաւորներ որոնք իրրեւ նմոյշ
ամփոփուած են այս տետրակի մէջ,
ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տը-
պագրուած ազգային երգարաններին
մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն
վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա
և Արմենիա լրագիրներուն մէջ : Նմոյշներէ
մէջ փոքրիկ տեղեկութիւններ տըր-
ուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ
ի՛նչ տպարարութիւնների տակ ներշն-
չուելով գրուած են: Գինն (10 սանթիմ)
15 սանթիմ :

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ Ա ԻՆՈՒԱԾ
ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԱԼԱԲԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը
ներկայացունէ ընտանեկան տխուր
պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ
անբարոյական մի հայր իւր ապական-
ուած վարքուբարքով որչա՛փ չարիք-
ների պատճառ դարձած է և վերջ է
վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով
սպանուած և անհետացած է աշ-
խարհէ : Գինն 1 ֆրանգ, (75 սանթիմ):

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE
ՄԱՐՍԷԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi,
Allées de Meilhan, 44.